

«ՇԻՐԱԿԱՅ ԱՄՔԱՐՔ»-Ի ՇՈՒՐՋ

ՍԱՐԴԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Թէ քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարքն շին»¹։ Հին հայկական առածը վկայում է, որ «Շիրակայ ամբարք» կոչված օբյեկտները ունեցել են համահայկական ճանաչում։ Իսկ թե ինչպիսին էին Շիրակ գավառի ամբարները, պատկերացում է տալիս հայկական այն ավանդությունը, որը պատմվել է Շիրակի Բաշ-Շորագյալ (հնում՝ Շիրակավան) գյուղից հյուսիս ընկած Բանձրեկ սարահարթի քարանձավների վերաբերյալ։ «Շորագյալցիների ասելով, այս ֆառայրենքը եղել են շատակե՛ր Շառայի ամբարենքը, որը ապրել է Ղարսա-շայի և Արփա-շայի (Կարսագետի և այժմյան Ախուրյանի—Ս. Պ.) միջև ընկած բարեբեր հարթության վրա»²։

Դեռևս խոր հնադարից հիշյալ քարանձավների օգտագործելի լինելու մասին են խոսում այստեղից պեղված բրոնզեդարյան իրերը³։ Ինչ որ դրանք օգտագործվել են նաև վաղ երկաթի դարում, մեր կարծիքով, վկայում են ուրարտական արձանագրությունները. դրանցից մեկի համաձայն Սարգուր II-ի (մ. թ. ա. 764—735 թթ.) զորքերը իրենց մի աղչավանքի ժամանակ գրավել էին էրիախի (Շիրակ)⁴ երկիրը՝ ավարի ու ասիերի մատնելով 150 մուր-ներ⁵։

Ուրարտագետները սարգուրյան արձանագրությունների մուր բառին վերագրում են հետևյալ իմաստները. «թաքստոց, շտեմարան», «գաղտնի պահեստ», «թանկարժեք իրեր պահելու շինք, գանձարան», «ամրացված շինություն, ամրոց, բերդ»⁶։ Մուր բառի այսպիսի բացատրությունները միայն աղոտ պատկերացում են տալիս դրա ինչ լինելու վերաբերյալ։ Իսկ որ դրանք, ստուշիվ, եղել են ամբարների վերածված քարանձավներ, ցույց է տալիս դեռևս Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ տեղ գտած մոցի (մորույ, մորեսաց) բառը, որի բացատրությունն է. «Որը գաղանացի մէջ մայրիաց, ուր են եւ կորիւնք ընդ մօրն. կաղաղ. խշտի. դադար, մօրի, մօրնի...»⁷։ Մոցի բառի դիմաց «Բառգիրք հայոց»-ն ունի հետևյալ հովանիշները. «անձաւ, կամ որջ, կամ կաղաղ, կամ դադար, կամ բոյն, կամ պտուղ մորենւոյ»։

¹ «Մովսիսի ետրենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 40։

² Արամ Ղաֆանջյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 39 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Ս. Պ.)։ Հմմտ. Գր. Бунятов, Памятники древности в окрестностях селения Баш-Шурагел («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XIII, Тифлис, 1892, с. 141)։

³ Գր. Бунятов, նշվ. աշխ., էջ 145—146։

⁴ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 304, 314, 364, 372—373։

⁵ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 175, Գր. Ղաֆանջյան, Ուրարտի պատմությունը, Երևան, 1940, էջ 70, 119։

⁶ Գր. Ղաֆանջյան, նշվ. աշխ., էջ 70, Ի. Ի. Мещанинов, Аннотированный словарь урартского (биайнского) языка, Л., 1978, с. 212։

⁷ «Նոր բառգիրք հայկազնան լեզուի», հ. երկրորդ, Լ—Յ, Վենետիկ, 1837, էջ 298։ Հայերեն մոցի և ուրարտական արձանագրությունների մուր բառերի համապատասխանության տեսանկյունից հիշենք, որ ուրարտական արձանագրություններում օ հնչյունը կա արտացոլված է ս-ի միջոցով (Գր. Капанцян, Историко-лингвистические работы, т. II Ереван, 1975, с. 35)։ Հմմտ. Ծոփք, Տոսպ, Կոտոմ և Տuրa, Tušpa, Qušime (Օ. Օ. Карагезян, Город Кугуме урартских источников, «Պատմա-բանասիրական հանդես» 1974, № 3, էջ 191—192)։

(վերջինը վերաբերում է մորի հատապտղին)⁸։ Այսուամենայնիվ, բացառված չէ, որ մորի («անձավ») բառը հնում ունեցել է իր մորի տարբերակը։ Հօգուտ դրա է, կարծես, խոսում ինչպես հարավային Շիրակի Մրեն տեղանունը, որը Գր. Ղափանցյանը բխեցնում է նախնական *Muriana ձևից⁹, այնպես էլ հայերեն մրմիմբ բառը, որը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ձեռագրերից մեկում գործածված է ամբարք-ի փոխարեն («Շիրակայ մրմինք» փոխանակ՝ «Շիրակայ ամբարք»)։¹⁰

Բնականաբար, ուրարտական արձանագրությունների mugi-ների, այսինքն «Շիրակայ ամբարք»-ի տակ հասկանալու ենք ոչ միայն Շիրակավանի մերձակայքի, այլ նաև Շիրակի մյուս շրջանների նույնատիպ քարանձավները¹¹, ինչպես Թ. Թորամանյանն է գրում, բուն Անիում «նախ և առաջ պետք է նկատի առնել այն հազարավոր քարայրերը, որոնք խտացած են Մաղկոցաձորի, Ալաշաձորի, Գլիձորի և Ախուրյանի ձորերում մեջ... Մեծամեծ քարայրեր կան, որոնց մեջ այսօր երկու հազարեն ավելի ոչխար կտեղավորեն քուրդ հովիվներ... Թշնամիներու հարձակման ժամանակ քարայրերը ամենեն ապահով ապաստարաններն էին»¹²։ Լեոն, նշելով, որ Անիի առանձին քարանձավային սրահներում ապաստան կարող էին գտնել հարյուրավոր մարդիկ, ավելացնում է. «Գուցե նրանք պատերազմական գիտություն մշակած գաղտնարաններ, մթերանոցներ, նույնիսկ ժամանակավոր ապաստանատեղեր են եղել»¹³։ Որ Շիրակավանի մոտերքի քարանձավների նման Անիինը ևս գոյություն են ունեցել և օգտագործվել են նաև հնագրում, վկայում է այստեղ պեղված բրոնզե ապարանջանը, որը թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի վերջով¹⁴։

Անձավաշատ վայրեր էին նաև բուն Անիից դուրս գտնվող, բայց նրա արվարձանները համարված Բազնայր (արևմուտքում) և Հոռոմոսը (արևելքում)։ Բազնայրի «Բազքենների այր ըսված քարայրերի»¹⁵ վերաբերյալ Թ. Թորամանյանը հաղորդում է. «Անիի ավերակներից մոտավորապես 7—8 կիլոմետր դեպի արևմուտք, Ալաշա լեռան ստորոտում կա մի գյուղ՝ Ղոզլիջա անունով։ Այս տեղի հին անունն է Բազնայր, ուր եղել են բազիլներ՝ մասնավորապես այժմ գոյություն ունեցող քարայրերի մոտ»¹⁶։ Իսկ Հոռոմոսի մասին նա ասում է. «Ենթուձորի արևելյան և հարավային լանջերու վրա մինչև այսօր մնացած կան պատմիչի»¹⁷ ակնարկած քարանձավներն մեկ քանին»¹⁸։

8 Շառգիրք։ Հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ղ. Մ. Ամասյանի, Երևան, 1975, էջ 220, Հմմտ. նաև «Կաղաղ-որջ, կամ բոյն, կամ ծածկոյթ, կամ մորի, կամ խաղաղ» (նույն տեղում, էջ 155)։

9 Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 70, ծան. 1։

10 Խորենացի, էջ 40, ծան. 5։

11 Իհարկե, Ախուրյան գետի ավազանում սփռված և մարդու բնակության հետքեր պահած անհամար քարանձավներից բոլորը չէ, որ նույնպիսի օգտագործում են ունեցել նաև հնագրում։

12 Թորոս Թորամանյան, նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 325—327։

13 Լեոն, Անի, Տպավորություններ, հիշատակներ, անցած և մնացածը, Երևան, 1963, էջ 212—215, 220—221։ Ստորերկրյա Անիի մասին տե՛ս Կ. Օրբելի, Краткий путеводитель по городу Ани, СПб., 1910, с. 8—11 և հաջ.։

14 Н. Я. Марр, Ани, столица древней Армении («Историко-археологический па-бросок»), СПб., 1898, с. 15։

15 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 310։

16 Նույն տեղում, էջ 308։

17 Խոսքը Գեորգի Սր. Նշանի պատմության (XI—XII դդ.) հեղինակի մասին է (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1887, էջ 28)։

18 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 304։

Հնադարյան քարանձավներ գոյություն ունեն նաև այժմյան Լենինականի շրջակայքում: Քաղաքից հյուսիս-արևմուտք, Ախուրյանի ձախ ափից ոչ հեռու, վերջին տարիներին հայտնաբերվել և մասամբ պեղվել է մի ամրոց անձավախումբ: Այդպիսի քարանձավներ կան նաև Լենինական—Արթիկ ճանապարհի աջ կողմում, Հոռոմ գյուղի արևելքում բարձրացող բլուրների մեջ¹⁹: Առ այսօր մարդկանց ծառայող այդ քարանձավների՝ հնադարում ևս օգտագործելի լինելու մասին են խոսում հիշյալ բլուրների վրա գտնվող նախնադարյան ամրոցների ու քաղաքի ավերակները²⁰:

Մեր կարծիքով, Շիրակի տարածքում բազմաթիվ քարանձավների գոյությունը է պայմանավորված այս գավառի Շիրակ անունը, որովհետև և՛ հնչյունաբանական, և՛ իմաստաբանական ակնհայտ աղերս գոյություն ունի հին հայկական Շիրակ (<*Շիրակ) և հին հունական Σηράκιον (անձավաշատ վայրի անուն էր Պիրեյում)²¹ տեղանունների միջև: Բայց, նախ տեսնենք, թե մինչև այսօր ինչպես է ստուգաբանվել այս տեղանունը: Մովսես Խորենացին, ժողովրդական ավանդազրույցի հետևությամբ, գրում է, որ Արամայիս Հայկազնը «...ղորդի իւր զՇարայ, զլուովածին և զշատակեր, առաքէ ամենայն աղիսի իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լեռինն, որ անուանեցաւ Արագած, յորոյ անուն եւ զգաւառն ասեւ անուանեալ Շիրակ»²²:

Գր. Ղափանցյանը, մերժելով հորենացու բերած՝ Շիրակ < Շարա(յ) ստուգաբանությունը, գրում է. «... Տիրակ անունը ծագումնաբանորեն մենք պետք չէ կապենք Տարա-յի հետ: Խիստ մեծ բռնազրոսիկություն կլիներ Տարա-ն դիտել որպես «շիր-եցի» (-ak վերջածանցով)՝ Տիր արմատից, և այդ տարբերակը կապել Տար(a)-ին»²³: Ապա՝ «Այդ Տար(a) տերմինից մենք բխեցնում ենք, «Արաքսի ձորի» (Ծրասխաձոր) ետին անվանումը, իմա՝ Արաքսունիք-ը, որի տակ ավելի ուշ հասկացվում էր Արաքսին և Արփաշային հարող և հետագա «Զալդրան»-ին մասամբ համընկնող ավելի ընդարձակ մի տարածություն»²⁴:

Շիրակ տեղանվան գիտական ստուգաբանությունը փորձել է տալ Բ. Պատկանյանը, ըստ որի այս տեղանունը ծագում է սարմատական-հյուսիսկովկասյան սիրակ (Σιρακεα, Σιρακοι, Siraci) ցեղի անունից²⁵, Սակայն բանն այն է, որ Շիրակ գավառի անունը հոգնակի կիրառություն (ասենք, հոգն. ուղղ. *Շիրակք կամ հոգն. սեռ. *Շիրակաց ձևերով) երբևէ չի ունեցել, ինչը սպասելի էր նրա ցեղանվանական ծագման դեպքում: Ի դեպ, մեր տեղանվան համար բացառվում է նաև կ-ից հետո ք-ի անկման (այսինքն՝ -կք> -կ անցման) հնարավորությունը: Հմմտ., օրինակ, -կք-ով ավարտվող ցեղանվանական ծագմամբ հին հայկական Մոկք և Ճակք գավառանունները, կամ կովկասյան ազգագավառներից երկուսի հին հայկական Ղեկք (Լեկք) և Դուր-ձուկք անվանումները²⁶: Ն. Ադոնցը, խոսելով սարմատական հիշյալ ցեղան-

19 Նույն տեղում, էջ 21:

20 Նույն տեղում, էջ 17—20:

21 И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, с. 1470.

22 Խորենացի, էջ 40:

23 Г. А. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, с. 119.

24 Նույն տեղում, էջ 121: Այսուամենայնիվ, Շարան իր անվամբ Շիրակ գավառի անվան հետ ոչինչ ընդհանուր չունենալով հանդերձ, շարունակում է կապված մնալ այս գավառին՝ հին հայկական ավանդազրույցի ու առածի մեջ ի ցույց հանելով իր նախնական էությունը որպես Շիրակի և հարակից շրջանների հնագույն բնակչության կողմից պաշտված հացահատիկն անձնավորող նախնի-աստված:

25 К. П. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии («Журнал министерства народного просвещения», ССXXX, отд. 2, СПб., 1881, с. 112).

26 Ս. Տերման, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 49, 64, 71 և քարտեզը:

վան և Շիրակ տեղանվան առնչության մասին, միևնույն ժամանակ, փաստորեն, կասկածի տակ էր առնում դրանց միջև ծագումնաբանական կապի գոյության հնարավորությունը, ենթադրելով, որ Շիրակը կարող է նշանակել «դաշտ, տափաստան» (հմմտ. Շիրակի տափաստանի անունը կախնթում)²⁷։ Սակայն, դա մնում է սոսկ ենթադրություն, որովհետև նրա առաջարկած $\chi\sigma\iota\upsilon\theta\alpha > \text{šehra} > \text{širak}$ անցումը հնչյունաբանորեն հիմնավորվել անհնար է²⁸։

Տեսանք, որ Շիրակ գավառի անունը ցեղանվանական ծագում չունի, այնպես, ինչպես ցեղանվանական ծագում չունեն Հին Հայաստանի, ասենք, Աղբակ, Ճաճուկ, Երեզակ գավառանունները²⁹։ Ամենայն հավանականությամբ, Շիրակ-ը իր հիմքում ունի մի այնպիսի հասարակ գոյական, ինչպիսիք ունեն, օրինակ, Ագառակ, Բերդ, Իջևան տեղանունները՝ ծագած համապատասխան հասարակ գոյականներից։ Այսուհանդերձ, մեր համոզմամբ, հայկական Շիրակ գավառանունը ոչ մի կապ չունի վրացական տափաստանի անվան հետ (եթե, իրոք, Շիրակի անունը «դաշտ, տափաստան» իմաստն ունի) և նշանակում է «բարանձավ» կամ «բարանձավ-ամբար»։ Հօգուտ դրա է, կարծես, խոսում վերևում մեր անցկացրած ղուգահեռը հին հայկական և հին հունական վերոհիշյալ անձավաշատ վայրերի կրած Շիրակ (<Շէրակ) և Σηραγγα անունների միջև³⁰, որովհետև այն կարելի է հիմնավորել ինչպես իմաստաբանորեն՝ հունական տեղանվան հիմքում ընկած հունա-պելասգյան ծագմամբ σήραγγα (-γγα) բառը նույնպես նշանակում է «բարայր, բարանձավ» (նաև «փապար, ծերպ, ճեղք»)՝³¹, այնպես էլ հնչյունաբանորեն՝ պելասգերենի չ հնչյունը իր հունարեն համարժեքի բացակայության պատճառով գրություն մեջ վերադարձվելով էր (իսկ հույների կողմից նաև արտասանվում) հունական σ տառով։ Ինչպես Գ. Զահուկյանն է գրում, «...եթե ճիշտ են պել. σ-ով և հայ. շ-ով ղուգահեռները, ապա նշանակում է՝ պելասգերենում σ-ն արտասանվել է չ ...» (հմմտ., օրինակ, պելասգերեն σείας «փայլ» և հայերեն շող, պելասգերեն σάρον «կարմրավուն թանկագին քար» և հայերեն շառ «մուգ կարմիր, արյունաշեկ»)՝³²։

Քանի որ պելասգերենի ու թրակերենի մերձավորությունը հասնում է բարբառային ընդհանրության աստիճանի³³, ուստի հունա-պելասգյան σήραγγα բառի մասին առվածները՝ հենվելով «բարանձավ» > «բարանձավ-ամբար» > «ամբար» իմաստային անցման հավանականության վրա, կարելի է վերագրել նաև թրակերեն σίρο «հոր», σιρός «գետնափոր տուն» և թրակյան ծագմամբ հունարեն σίρος «ցորենի ամբար» բառերին³⁴։ Վերջիններիս հիմքում ընկած թրակերեն բառի իմաստային զարգացման երկու ծայրակետերի՝ «հոր» — «ցորենի ամբար», միջև կամրջող օղակ է հունարենից կամ թրակա-

27 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 424—425, пр. 3.

28 Ի դեպ, բառերից երկրորդի վերաբերյալ պետք է ասել, որ այս իմաստով պարսկերենում կա միայն արաբերենից փոխառյալ سَهْرَاء (sahrā) > հոգն. سَارَى («դաշտ, հարթավայր», «տափաստան, անապատ») բառը, հմմտ. سَهْرَاء «Սահարա» հանրահայտ անապատի անունը («Персидско-русский словарь», т. II, М., 1970, с. 132—133):

29 Ս. Տ. Երեմյան, Նշվ. աշխ., էջ 33, 51, 64:

30 И. Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь т. II, с. 1470.

31 Նույն տեղում:

32 Գ. Բ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 97:

33 Նույն տեղում, էջ 49: В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 281.

34 Հ. Ահաճյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1977, էջ 119, В. П. Нерозин, Палеобалканские языки, М., 1978, с. 54.

պեղասզյան ինչ-որ բարբառից³⁵ փոխառյալ լատիններեն *SIRUS* «ստոր-դետնյա ամբար» բառը³⁶, որը, կարծես թե, ավելի հարազատ է մնացել խնդրո առարկա բառի պարունակած սկզբնական իմաստին, քան հին հունարեն բառը իժե ընդունենք, որ պեղասզյան յփրաչ-ի նման թրակյան յփրոս և յփրոս բառերը ևս նախապես արտասանվել են Ֆ-ով, ապա սրանց և մեր Երեւակ տեղանվան առաջին բաղադրիչները ևս կարող են համաժառուցվել լինել։ Այսպիսով, անժխտելի իրողություն է պատմական Երեւակի տարածքում այն բարունձավների առատությունը, որոնք հնուց ի վեր եղել են թե՛ որպես գյուղատնտեսական արտադրանքի (մասնավորապես, հացահատիկի) պահեստավորման վայրեր, թե՛ որպես անաստարաններ ու բնակավայրեր։ Հստակ երևութիւն, քարանձավի այդ տեսակը տեղի հնաշույն բնակչության՝ «Շառայի «արմերի» (ստրաբոնյան սարապարների) կողմից կոչվել է նաև «շի-րակ» («շիրակ, համտ. հունա-պելաոգ. յփրաչ՝ «քարանձավ» բառը)։ Հենց այս բառից են, հավանաբար, սերում ինչպես մեր գավառի Երեւակ, այնպես էլ նրա կենտրոնական բնակավայրերից մեկի՝ Երեւակաւան-ի անունները (համտ. հին հունական Տηροχλυν տեղանունը)։

Հստակաբար, Երեւակի քարանձավներից են ստացել իրենց անունները ոչ միայն Երեւակ գավառանունը, Երեւակաւան և Մեհեն տեղանունները, այլև -այլ (Քարայր, քարանձավ) բաղադրիչը պարունակող Բագնայր և Կումայրի տեղանունները, որոնցից առաջինը, ինչպես վերևում տեսանք, հստակ ստուգաբանություն ունի, որովհետև կադմված է բագին (հեթանոսական աստծու տաճար, մեհյան, զոհասեղան) և այլ բառերից։ «Գին-այր» Բագնայր։ Հստ. Թորամանյանի, «...բացի ավանդաբար բազմաբանի այլ ըսված քարայրներից, այս գյուղի շրջանում գտնված... աշտարակաձև շինությունները պատճառ են դարձել այս գյուղի Բագնայր կոչվելուն»³⁷։

Ավելի դժվար է ստուգաբանվում Կումայրի տեղանունը, որը կադմված է քիչ ծանոթ -այրի և գրեթե անծանոթ կում- բառերի հարադրությամբ։ Սրանցից -այրի-ն, ինչպես ցույց է տալիս «Բառգիրք հայոց»-ը, նույն այլ բառի մի տարբերակն է («Այր-այրի, յէր, կամ մաղարայ, կամ քոփ, կամ քարայր»³⁸, Հստ Գր. Ղափանցյանի, Կումայրի տեղանվան մեջ -այրի-ն նշանակում է «քարանձավային», իսկ կում-ը նույնական է անհայտ նշանակությամբ խոտիներեն (") kumma բառի հետ՝ պահպանված նաև հայաստանյան Kummata քաղաքանվան և Հայկական լեռնաշխարհին հարող փոքրասիական շրջաններից հայտնի մի շարք տեղանունների մեջ³⁹, Կումայրի տեղանվան կում- բաղադրիչը նույնական ենք համարում հայերեն ախումբ («խումբ, ժողով, բազմություն») բառի կամ արմատի հետ։ Ախումբ բառի մեջ կում արմատին կցված սկզբնաձայն ա-ն նախահավելվածական ձայնավոր է, իսկ վերջին բ-ն՝ մ>մմ>մբ անցման հետևանք⁴⁰, վերջին առիթով համեմատենք բարբառային ագում or (<ակում or) բառակապակցությունը և հայերենից

35 Կենտրոնական Խաղաղության թաղամար բնակչության երեմնի գոթական վերաբերյալ տե՛ս Ի. Լ. М а я к, Проблема населения древнейшего Рима («Вестник древней истории», 1979, № 1, с. 81—83, 92—93)։

36 Ի. Խ. Дворецкий, Латинско-русский словарь. М., 1976, с. 935.

37 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 310։

38 «Բառգիրք հայոց», էջ 17։

39 Գր. Капанцян, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ереван, 1956, с. 50.

40 Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Հին շրջան, Երևան, 1961, էջ 182—183։ Համտ. կադմ-ը, պառչգամ-ը, սալամ-ը և այլն (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. Ա, Երևան, 1971, էջ 110)։

փոխառյալ վրացերեն ակումի («ժողովուրդ, բազմություն», «գեղ, կույտ, խումբ») բառը⁴¹։ Նշված մ>մ>մբ անցումն առկա է նաև Կումայրի անվան ուշ շրջանի տարբերակներից մեկում՝ Գումբրի (փոխանակ՝ Գումրի)⁴²։ Սրանք հիմք են տալիս ենթադրելու, որ Կումայրի տեղանվան նախնական իմաստը «այրախումբ, անձավախումբ» էր լինելու։

Նույն -այր բաղադրիչով են կազմված նաև Շիրակին հարևան Գուգարքի Քոբայր և Հոռոմայր բնակավայրերի անունները, որոնցից Քոբայր, անունը պետք է տրոհել ռոբ- և -այր բաղադրիչների։ Վերջինս մեզ ծանոթ այր բառն է⁴³, իսկ առաջինը, հավանաբար, «Բառգիրք հայոց»-ում հիշատակված ռոփ (<քոբ) բառն է՝ հոմանիշը այր, այրի, յէր, մաղաբայ և փաբայ բառերի⁴⁴։ Ամենայն հավանականությամբ, նախկին ռոբ-ին այր-ը կցվել է ավելի ուշ, երբ Քոբ-ի հատուկ անվան (տեղանվան) վերածվելուն զուգընթաց հետզհետե մթազնեղ էր նրա նախնական «քարայր» իմաստը։ Գուգարքի հիշյալ բնակավայրից երկրորդի անունը՝ Հոռոմայր-ը, նույնպես պետք է բաժանել երկու բաղադրիչների՝ հոռոմ- և -այր։ Վերջին բաղադրիչը դարձյալ մեզ ծանոթ այր («քարայր») բառն է, իսկ առաջինը, անկասկած, նույնն է հայկական այնպիսի տեղանունների համապատասխան բաղադրիչների հետ, ինչպիսիք են Հոռոմոս-ն ու Հոռոմ-ը Շիրակում և Հոռոմաշեն-ն ու Հոռոմ-գան-ը՝ Գուգարքում։ Առաջին երկուսի տեղագրության մասին խոսք եղավ վերևում, իսկ երրորդն ու չորրորդը տեղադրվում են Գուգարքի Կանգարք գավառում⁴⁵։

Այսպիսով, Շիրակ, Շիրակաւան, Մրեն, Բագնայր, Կումայրի տեղանունների ստուգաբանությունները՝ Բանձրելի քարանձավների վերաբերյալ պատմված ավանդության հետ միասին, հանգեցնում են մի այսպիսի հետեւություն։ «Շիրակայ ամբարք» կոչված օբյեկտները նույնանալով ուրարտական արձանագրությունների muri-ների հետ, եղել են նախնադարյան այն քարանձավները, որոնք որոշակի ձևափոխությունների ենթարկվելուց հետո հնագույն շիրակցուն ծառայել են թե՛ որպես գյուղատնտեսական արտադրանքի պահեստավորման վայրեր, թե՛ որպես ապաստարաններ։

41 Չ. Ա ճ ա ո յ ա ն, Նշվ. աշխ., էջ 110։ Հմմտ. նաև հունարեն γῶμος (ամեծ խումբ, բազմություն, թափոք, «երամ, ջարան») բառը, որի և հայերեն ա-կում-ը բառի հնարավոր ազգակցության վերաբերյալ կարծիք է հայտնել Գ. Զահուկյանը (Г. Б. Джаукян, Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967, с. 119, 151)։

42 Ս. Ս. Երեմյան, Նշվ. աշխ., էջ 61։ Ի դեպ, անընդունելի պետք է համարել այս տեղանվան Գումբրի (<Գումրի) տարբերակը կիմերների gimirrai ցեղանունից բխեցնող ենթադրությունը, որովհետեւ տեղանվան ավելի հին (արդեն VIII դ. հայ մատենագրության մեջ արձանագրված) տարբերակը՝ Կումայրի-ն, ոչ մի կերպ gimirrai (կամ gamirrai) ձևից ծագել չէր կարող։

43 Гр. Капанцян, Историко-лингвистические работы к начальной истории армян, с. 50.

44 «Բառգիրք հայոց», էջ 17։

45 Տե՛ս «Նյուրիկյանների թագավորություն (972—1118 թթ.)» քարտեզը, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 493։

О «ШИРАКСКИХ АМБАРАХ»

САРГИС ПЕТРОСЯН

Резюме

Из сопоставления древнеармянской пословицы о Шара и ширакских амбарах с поздним преданием о пещерах близ Ширакавана (которые считались амбарами того же Шара) вытекает, что вошедшие в пословицу «ширакские амбары» представляли собой пещеры-амбары. Вместе с такими топонимами ширакского региона, как *Širak*, *Širakaḡan* (ср. др.—греч. σῆραῖς «пещера», «расселина, трещина», Σηράγγιον — название пещеристой местности в Пирее), *Bagnaug*, *Kutaug* (компонент—ауг этих топонимов ср. с арм. ауг «пещера»), и особенно *Mrep* (<*тигі-ана), указанные пословица и предание свидетельствуют о том, что под словом *tiḡil* (ед. число—*tiḡi*) урартские надписи подразумевают те же объекты, т. е. пещерные амбары Ширика (урарт. Эриахи): ср. арм. *toḡi* «пещера, нора, берлога, логово».